

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «(այսուհետ՝ հիմնարկ)» բառերից հետո լրացնել «և համայնքային կառավարչական հիմնարկների» բառերը.

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել նոր նախադասությամբ.

«Համայնքային կառավարչական հիմնարկների մասով սույն օրենքի դրույթները գործում են այնքանով, որքանով չեն հակասում «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության և այլ օրենքներին:»

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «դատախազությանը,» բառից հետո լրացնել «տեղական ինքնակառավարման մարմիններին,» բառերը,

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Համայնքային կառավարչական հիմնարկի անվանումը ներառում է մարզի, համայնքի անվանումը, ինչպես նաև. «քաղաքապետարանի» (քաղաքային համայնքների համար) կամ «գյուղապետարանի» (գյուղական համայնքների համար) «աշխատակազմ» բառերը:»

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «պետական» բառից հետո լրացնել «կամ տեղական ինքնակառավարման» բառերը,

2) 2-րդ մասում «պետական» բառից հետո լրացնել «կամ տեղական», իսկ «տուրք» բառից հետո «կամ տեղական վճար» բառերը.

3) 3-րդ մասում «պետական» բառից հետո լրացնել «կամ համայնքի» բառերը.

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունը» բառերից հետո լրացնել «(համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքը)» բառերը.

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում.

1) «Հայաստանի Հանրապետությունն է» բառերից հետո լրացնել «(համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքը)»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի հիմնարկին՝ համայնքի ավագանին:»

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության անունից» բառերից հետո լրացնել «(համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքի անունից)» բառերը,

2) 6-րդ մասում «պետական» բառից հետո լրացնել «(համայնքային)» բառը.

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Համայնքային կառավարչական հիմնարկի ղեկավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:».

Հոդված 9. Օրենքի 11-րդ հոդվածի.

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ե.1» կետով.

«ե.1) քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի քարտուղարին նշանակում է համայնքի ղեկավարը.»

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կետի դրույթը չի տարածվում համայնքային կառավարչական հիմնարկի վրա:»

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«3. Քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:»

Հոդված 11. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում «ղեկավարի վրա» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի քարտուղարի վրա» բառերը.

Հոդված 12. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Համայնքային կառավարչական հիմնարկի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավորի: Գործունեությունը դադարեցրած համայնքային կառավարչական հիմնարկի քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմակերպված համայնքին:».

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկություն	Եզրակացություն
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյան	Առաջարկում եմ լրամշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը՝ առաջարկվող լրացումը տեղափոխելով օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական դրույթներից հետո:	Ընդունվել է, առաջարկվող լրացումը տեղափոխվել է 11-րդ հոդվածի 3-րդ մասից հետո:
2	ՀՀ կառավարություն	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է լրացնել նոր 3-րդ և 4-րդ հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝ ՀՈԴՎԱԾ 3 «ՀՈԴՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը «1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը: 2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը»:	Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ հոդվածներով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: Միաժամանակ, առաջարկության ընդունման կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում

		ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:	
		«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում հոդվածների առանձին-առանձին թվարկելու փոխարեն՝ մեկ ընդհանուր դրույթով սահմանել, որ «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովածներով:	Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: